ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՒԴԱՐՔԸ XI Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

XI դ. առաջին կեսին Լոռվա թագավորությունը հասավ իր ռազմական ու քաղաքական հզորության բարձրակետին։ Այդ այն ժամանակաշրջանն էր, երբ Լոռիում (Արևելյան Գուգարքում) իշխող Կյուրիկյանները ոչ միայն հաջողությամբ պայքարում էին իրենց սպառնացող ուժերի դեմ, այլև կարողացան առաջ ընթանալ դեպի արևելք և որոշ նվաճումներ կատարել հարևան Ուտիք նահանգում։ Կյուրիկյանների համեմատաբար կարճատև հզորացման այդ ժամանակամիջոցը հիմնականում համընկավ թագավորության հիմնադիր Գուրգենի հաջորդ և ավագ որդի Դավիթ Անհողինի իշխանության տարիների հետ (մոտ. 996—1048/49), ընդգրկելով XI դ. ամբողջ առաջին կեսը։

Դավիթ Կյուրիկյանը կամ, ինչպես նրան հաճախ անվանում են՝ Դավիթ Անհողինը, իշխանությունը ստանձնեց X դ. 90-ական թթ. կեսերին։ Արձանագրություններում նրա անունը առաջին անգամ հանդիպում է 996 թ.[1]։ «Անհողին» անվան ծագումը պարզ չէ։ Մասնագետները առաջարկել են տարբեր բացատրություններ, սակայն դրանցից ոչ մեկը համոզիչ չէ[2]։

Դավթի թագավորության սկզբնական շրջանը շատ սուղ է լուսաբանված աղբյուրներում։ Միակ տեղեկությունը հաղորդում է Ստեփանոս Տարոնեցին։ Նրա խոսքերից իմանում ենք, որ Դավիթը կարողացել է գրավել Դմանիս քաղաքը և իրեն ենթարկել Թբիլիսիի արաբ ամիրային, հաջողությամբ կռվել է նաև Գանձակի ամիրայության դեմ։

X դ. 70-ական թթ. Գանձակում հաստատվեց քրդական ծագում ունեցող Շադդադյան տոհմի իշխանությունը։ Այն առանձնապես ուժեղացավ Փատլուն Ա-ի օրոք (985—1031), որը կարողացավ գրավել Պարտավը, Փայտակարանը, Շամքորը և բավական ընդարձակել ամիրայության սահմանները։ Փատլունին հաջողվեց գրավել նաև Փառիսոսի մի մասը, Խաչենը, Սևորդիքը և Ռվինը[3]։

Փատլունը սպառնաց նաև Լոռվա թագավորությանը։ Առաջին ընդհարումը տեղի է ունեցել X դ. վերջում կամ XI դ. առաջին տարիներին, որովհետև այն

---

1 Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 264։

2 Ոմանք կարծում են, թե Դավիթը, որը ըմբոստացել էր Անիի Գագիկ Ա թագավորի դեմ, պարտվել ու կորցրել էր իր հողերը, ուստի ստացել էր իր մականունը։ Տե՛ս Լ. Մելիքսեթ-բեկ, Վարդապետք հայոց հյուսիսային կողմանց (վրացերեն), Թբիլիսի, 1928, էջ 28։ Հ. Հարությունյան, Հայաստանը IX—XI դդ., Երևան, 1959, էջ 119։ Այդ բացատրությունը անհաջող է, որովհետև ըմբոստությունը, որի մասին կխոսվի ստորև, տեղի է ունեցել 1001 թ., մինչդեռ Հաղբատի նշված 996 թ. արձանագրությունում արդեն հիշատակվում է «Անհողին» անունը։ Այդ մասին տե՛ս նաև M. Brosset, Monographie des monnaies Armeniennes, SPB, 1839, էջ 31։

3 «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 256։ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 100։ Մխիթար Այրիվանցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 60։

արձանագրված է միայն Ասողիկի մոտ, որը իր «Պատմությունը» ավարտել է 1003 թ. դեպքերով։ Սակայն Դուգարքում Փատլունը հաջողություն չունեցավ։ Նրա բանակը ծանր պարտություն կրեց, իսկ ինքը մի կերպ կարողացավ փախչել մարտադաշտից։ «Եւ ամիրայն Գանձակայ Փատլունն,—գրում է Ստ. Տարոնեցին,—փութացաւ պատերազմել ընդ նմա՝ զի մի զօրացեալ նկուն արասցէ զնա։ Իսկ Դաւիթ քաջապինդ սրտիւ պատերազմեալ պարտեաց զնա, սրախողխող և գետավէժ արարեալ զզօրս նորա. և ինքն մազապուր փախստեայ զերծանիւր»[4]։ Վարդան պատմիչի մոտ (էջ 100—101) սխալմամբ նշված է, որ Փատլունը հարձակվել է Դուդարքի վրա Կյուրիկե Ա-ի ժամանակ. «...գոռ դնէ ընդ Գագկայ թագաւորին Զորոյգետոյ, և ընդ Կիւրիկէի թագաւորին Աղուանից (իմա՝ Դուգարքի), և ընդ Բագարատայ թագաւորին Վրաց, և նեղէր զնոսա»։ Պատմիչը շփոթել է ժամանակագրական կարգը։ Փատլունը իշխել է մինչև 1031 թ.։ իսկ Կյուրիկեի օրոք (1050—1089), որը Դավթի հաջորդն էր, Գանձակում իշխել են Փատլուն Բ-ն (1067—1073) և Փատլուն Գ-ն (1073—1075), որոնք Դուդարքի վրա չեն հարձակվել։ Ղ. Մովսեսյանը Լոռվա թագավորության պատմությանը նվիրած իր աշխատության մեջ, շփոթվելով Վարդանի սխալ տեղեկությունից, Փատլունի արշավանքը վերագրում է Կյուրիկե Ա-ի ժամանակաշրջանին[5]։

Դավիթը կարողացավ հաջողությամբ ճնշել նաև ներքին կենտրոնախույս ուժերը։ Ըմբոստացում կենտրոնական իշխանության դեմ տեղի է ունեցել X—XI դարերի սահմանագլխին, երբ Գագի իշխան մարզպան Դեմետրը դուրս եկավ Դավթի դեմ։ Դեմետրը նույնիսկ իր որդուն նշանակեց Տաշիրի մամփալ։ Սակայն Դավիթը ճնշեց ըմբոստությունը, խլեց Դեմետրից Գագը և այլ բերդեր և «զբոլոր հայրենիսն. որ թափառեալ շրջեալ չարաչար մահուամբ սատակեցաւ. և բարձաւ տոհմն նորա»[6]։ Երկրի ներքին ու արտաքին դրության ամրապնդումը դրդեց Լոռվա թագավորին դուրս գալ Անիի շահնշահների գերիշխանությունից։ Հատկանշական է, որ Հաղբատի վերը նշած 996 թ. արձանագրությունում Դավիթը անվանված է «ինքնակալ արքա»՝ «...ի ժամանակս ինքնակալ արքային Դաւթի Անհողինի Գուրգենայ որդւոյ Բագրատունւոյ թագաւորին»։ Այս տիտղոսավորումից կարելի է եզրակացնել, ինչպես նշել է Ն. Մառը, որ Դուգարքի Բագրատունիների ներկայացուցիչը ավտոկրատության հավակնություն ուներ։ Մառի կարծիքով տվյալ դեպքում ինքնակալությունը պետք է հասկանալ դրսի ուժերից լրիվ անկախ լինելու իմաստով[7]։ Լոռվա Բագրատունիների պատմության մեջ այդ եզակի դեպքը ինքնին շատ նշանակալից է, սակայն փաստական նյութի պակասը անհնարին է դարձնում հարցի գիտական լուսաբանումը։ Միակ աղբյուրը դարձյալ Ասողիկն է, որը շատ սեղմ է արտահայտվում. «Իսկ Դաւիթ... ամբարձեալ անհնազանդութեան մասամբ առ հօրեղբայր իւր Գագիկ»[8]։

Ինչպես և պետք է սպասել, Դավթի փորձը հաջողություն չի ունենում։ Գագիկ շահնշահը 1001 թ. մեծ բանակով մտավ Դուդարք, շրջապատեց Դավթի

---

4 Ասողիկ, էջ 257։

5 Ղ. Մովսեսյան, Լոռիի Կյուրիկյան թագավորների պատմությունը, Վիեննա, 1923, էջ 50։

6 Ասողիկ, էջ 257։

7 Н. Марр. О раскопках и работах в Ани летом 1906 г., СПБ. 1907.

8 Ասողիկ, էջ 279։

նստավայր Շամշուլդեն, քանդեց նրա բերդերն ու ամրությունները։ Իսկ Դավիթը, ինչպես վկայում է պատմիչը, իր զորքի փոքրաթվության պատճառով չհամարձակվեց մարտի բռնվել Գագիկի հետ և ստիպված դիմեց Սարգիս կաթողիկոսի միջնորդությանը և իր հնազանդությունը հայտնեց շահնշահին[9]։

XI դ. 30—40-ական թթ. Գուգարքի թագավորությունը նորից ընդհարվեց Շադդադյանների հետ։ 1030 թ. Փատլունը հարձակվել էր Վրաստանի վրա և Դավիթը օգնության հասավ Վրաստանի ու Աբխազիայի թագավոր Բագրատ Դ-ին։ Ընդհանուր թշնամու դեմ կազմակերպվեց դաշնակցություն, որի մեջ, բացի Բագրատից ու Դավթից, մտնում էին նաև Կախեթի թագավորը և Թիֆլիսի ամիրան[10]։ Այդ միացյալ ուժը պարտության մատնեց Գանձակի ամիրային։

Ավելի սուր ընդհարում Շադդադյանների հետ տեղի ունեցավ 1040 թ., երբ Գուգարքի վրա հարձակվեց Դվինի ամիրա Աբուսուարը։ XI դ. 20-ական թթ. Դվինում իշխում էր Շավիր Աբուլ-Ասվար իբն Ֆադլը, որին Մատթեոս Ուռհայեցին անվանում է Աբուսուար։ Մինչև 1049 թ. նա իշխել է Դվինում, հետո տիրացել Գանձակին։ Դվինին տիրացել է դելմիկների 1021 թ. արշավանքից հետո[11]։ Աբուսուարը 1040 թ. 150 հազարանոց բանակով (այդ թիվը անշուշտ չափազանցված է Ուռհայելու կողմից) մտավ Գուգարք և, գրավելով բազմաթիվ բերդեր, մեկ տարվա ընթացքում նվաճեց երկրի մեծ մասը։ Ա. Տեր-Ղևոնդյանի կարծիքով Դվինի և Գանձակի Շադդադյանները միացյալ ուժերով էին հարձակվում և հարձակումը տեղի է ունեցել Գանձակի կողմից՝ արևմուտքից[12]։ Թշնամու գերազանց ուժը ստիպեց Դավթին օգնության համար դիմել հարևան հայկական իշխանություններին՝ Անիի ու Կապանի թագավորություններին և Աբխազիային։ Բացի դրանից, կազմակերպվեց աշխարհազոր։ Լոռվա թագավորին հաջողվեց հավաքել ընդամենը 20 հազարանոց բանակ։ Ուժերի մեծ լարումով Դավիթը կարողացավ ջախջախել Աբուսուարին և մաքրել երկիրը թշնամուց[13]։

1041 թ. մահացավ Անիի Հովհաննես-Սմբատ թագավորը և Բյուզանդիայի Միքայել Դ կայսրը նրա կտակի համաձայն պահանջեց իրեն հանձնել Շիրակի թագավորությունը։ Սակայն հակառակ կայսրության ոտնձգություններին, 1042 թ. Անիի գահին նստեց Գագիկ Բ-ն։ Դրանից հետո Գագիկը խաբեությամբ կանչվեց Կ. Պոլիս և պահվեց այնտեղ։

Անեցիները փորձեցին փրկել երկիրը և պետականությունը։ Այս դժվարին պահին քաղաքի մեծամեծները ելք են փնտրում դուրս գալու ստեղծված վի-

---

9 Նույն տեղում, էջ 279—280։

10 M. Brosset, Histoire de la Georgie, p. I, SPB, 1849. էջ 316։ Վրացական աղբյուրները վկայում են, որ հետագայում Բագրատ Դ-ի և Վրաստանի կենտրոնախույս ուժերը գլխավորող իշխան Լիպարիտի երկարատև պայքարում Լիպարիտը գիմել է Դավթին օգնության համար և օժանդակություն ստացել նրանից։ Լիպարիտին օգնություն է ցույց տվել նաև Կախեթի թագավոր Գագիկը (թագավորում էր XI դ. 30-ական թթ. սկզբից), որը Դավիթ Անհողինի որդին էր և Կախեթում հայկական հարստության հիմնադիրը։ Տե՛ս Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատ. Ա. Երևան, 1934, էջ 206։ M. Brosset Histoie de la Georgie, p. I, էջ 321—322։

11 Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 208—209։

12 Նույն տեղում, էջ 208։

13 «Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ», Երուսաղեմ, 1869, էջ 93—96։

ճակից։ Գահը ժառանգելու համար կային մի քանի թեկնածուներ, որոնք իրենց կողմնակիցներն ունեին Անիի իշխող վերնախավում։ Լայնորեն տարածված է այն կարծիքը, թե Դավիթ Անհողինը ևս իր կողմնակիցներն է ունեցել մայրաքաղաքում։ Այդպիսի ենթադրության համար հիմք է ծառայել Արիստակես Լաստիվերտցու մի տեղեկությունը. «Իսկ քաղաքացի գլխաւորքն որ նստէին յԱնի, իբրև տեսին թէ արգելաւ Գագիկ ի Յոյնս, խորհեցան երբեմն ի Դաւիթ տալ զքաղաքն ի Դունացին, քանզի քոյրն Դաւթի կին էր նորա, երբեմն ի Բագարատ թագաւորն Ափխազաց»[14]։

Լաստիվերտցու այս խոսքերը հասկացվել են այնպես, իբր Դավիթը եղել է թեկնածուներից մեկը։ Հ. Մանանդյանը գրում է. «...Քաղաքի գլխավորները Անիում, երբ նրանք տեսան, որ Գագիկ Բ-ին հույները արգելեցին Պոլսում, մտածեցին տալ քաղաքը կամ Աբխազիայի Բագրատ Դ թագավորին,... կամ Լոռու և Աղվանքի թագավոր Բագրատունի Դավիթ Անհողինին և կամ նույնիսկ Դվինի ամիրա Աբուլսուարին, որի կինը Դավիթ Անհողինի քույրն էր»[15]։ Նույն կարծիքին են նաև Ղ. Մովսեսյանը, Լեոն, Ե. Լալայանը, Ռ. Գրուսեն և ուրիշներ[16]։

Մեր կարծիքով Լաստիվերտցու վկայությունից երևում է միայն, որ Անիի մեծամեծների մի մասը ցանկանում էր քաղաքը հանձնել Դավիթ Դվինեցուն։ Պատմիչը ասում է, որ Դավթի քույրը Գագիկի կինն էր, նկատի ունենալով Դավիթ Դվինեցու քրոջը։ Մեզ թվում է, որ այստեղ շփոթություն է առաջացել։ Հայտնի է, որ Գագիկը Անիի կորստից հետո հաստատվեց Կապադովկիայում, ուր ամուսնացավ Վասպուրականի Սենեքերիմ թագավորի որդի Դավիթ Արծրունու դստեր հետ. «Եւ Գագիկ հրամանաւ թագաւորին առնու իւր կին զդուստր Դաւթի որդւոյ Սենեքերիմայ, և տիրէ նորին բաժնին. քանզի Դաւիթ վաղճանեցաւ չունելով այլ զաւակ ժառանգաւոր»[17]։

Միաժամանակ նույն Լաստիվերտցին հաղորդում է, որ Գագիկի քույրը, Հովհաննես-Սմբատի եղբայր Աշոտ թագավորի դուստրը, ամուսնացած էր Դվինի Աբուսուար ամիրայի հետ[18]։ Ըստ երևույթին Լաստիվերտցին շփոթել է երկու Դավիթներին։ Դավիթ Դվինեցու անվան տակ պետք է հասկանալ Դվինի Աբուսուարին, որովհետև 1022 թ. մինչև 1049 թ. նա էր իշխում Դվինում, ինչպես վկայում է Մունաջջիմ-բաշին[19], իսկ եթե Դավիթ Դվինեցին պատմական անձնավորություն է, ապա նա ոչ մի կապ չունի Դավիթ Անհողինի հետ, և Մանանդյանը ճիշտ չէ հասկացել Լաստիվերտցու խոսքերը։

Կյուրիկյանները, լինելով Անիի Բագրատունիների առանձին ճյուղի ներկայացուցիչներ, ստեղծված իրադրության մեջ հանդես եկան որպես Անի-Շի-

---

14 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», Երևան, 1963, էջ 62։

15 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ. Երևան, 1952, էջ 23։

16 Ղ. Մովսեսյան, նշվ. աշխ., էջ 46։ Լեո, Հայոց պատմություն, հատ. 2, Երևան, 1967, էջ 702։ Ե. Լալայան, Բորչալուի գավառ, «Աղդադրական հանդես», Թիֆլիս, 1901, № 7—9, էջ 315։ R. Grousset. Histoire de l'Armenie, Paris, 1947, էջ 378։

17 Ա. Լաստիվերտցի, էջ 63։

18 Նույն տեղում, էջ 96։

19 Ա. Տեր-Ղևոնդյան, Մունաջջիմ-բաշին Դվինի և Գանձակի Շադդադյանների մասին, «Բանբեր Մատենադարանի», 1962, № 6, էջ 482։

րակի թագավորության դահի օրինական հավակնորդներ[20]։ Լոռվա թագավորության վերելքի ժամանակաշրջանում նրանք, ի դեմս Դավիթ Անհողինի, փորձեցին գլխավորել Հայաստանի քաղաքական կյանքը։ Հովհաննես-Սմբատի մահից հետո, երբ գահը դեռ թափուր էր, Դավիթը կատարեց Անի մտնելու առաջին փորձը։ Մատթեոս Ուռհայեցին պատմում է. «Յայսմ ամի (1041) բազում անցումն եղև տանս Հայոց ի ձեռն Դաւթի Անհողինի՝ ազգապետին Յովհաննիսի Հայոց արքային։ Սա յարուցեալ ի վերայ թագաւորութեանն Հայոց և մատնեաց ի սուր և ի գերութիւն զգաւառս բազումս, և գայր անցանէր զօրօք յաշխարհն Հայոց։ Թողեալ զաշխարհն Աղուանից, և գայր ի վերայ աշխարհին Հայոց. բազումք նեղութեամբ և անթիւք կրակով այրեցան ի զօրացն նորա. և դարձաւ ի յաշխարհն Աղուանից ի տուն իւր»[21]։ Անհաջողություն կրելով Դավիթը նա վերադարձավ։ Երկրորդ փորձը կատարվել է 1042 թ.։ Այդ պարզ երևում է Ուռհայեցու կողմից դեպքերի շարադրման հաջորդականությունից։ Ըստ պատմիչի, Դավթի երկրորդ հարձակումը Անիի վրա կատարվել է 1042 թ. Բջնիի մոտ սելջուկների հետ տեղի ունեցած ճակատամարտից հետո և բյուզանդական Միքայել Դ կայսրի մահից (1042 թ. դեկտեմբեր) առաջ[22]։ Դավթի երկրորդ փորձը նույնպես անհաջողություն կրեց։ Այդ կապակցությամբ կարելի է ենթադրել, որ նրա հավակնությունը Անիի մեծամեծների մոտ անհրաժեշտ օժանդակություն չի գտել, և նրա կողմնակիցները մայրաքաղաքում, եթե նրանք եղել են, սակավաթիվ էին։ Ուռհայեցու նկարագրությունից պարզ երևում է, որ Դավիթը Շիրակի թագավորություն մտել է որպես հակառակորդ։ Նրա զինվորները «բազումք նեղութեամբ և անթիւք կրակով» են անցել նրա տերիտորիայով, բնակչությանը մատնելով «ի սուր և ի գերություն»։ Իսկ երկրորդ փորձի ժամանակ, երբ Գագիկը դեռ գահին էր, Դավթի քայլը պետք է դիտվեր որպես ապօրինի միջամտություն։

Այսպիսով, Լոռվա Բագրատունիների ձգտումը՝ դուրս բերել իրենց թագավորությունը տեղական շրջանակներից և գլխավորել պետական-քաղաքական կյանքը Հայաստանում, Դավթի ժամանակ հաջողություն չունեցավ։ Այդ բանին նրանք հասան ավելի ուշ, Դավթի հաջորդ Կյուրիկե Ա-ի օրոք (1050—1089), բոլորովին այլ քաղաքական իրադրության պայմաններում[23]։

Այլ մանրամասնություններ Դավթի կյանքից ու գործունեությունից հայտնի չեն։ Ստույգ հայտնի չէ նաև նրա մահվան թվականը։ Վերջին անգամ Ուռհայեցու մոտ հիշատակվում է Անիի դեպքերի կապակցությամբ (1041—1042), իսկ 1050 թ. արդեն իշխում էր նրա որդին՝ Կյուրիկեն։ Ուրեմն մահացած պետք է լիներ XI դ. 40-ական թթ. կեսերին կամ վերջում։ Մասնագետները ենթադրաբար մատնանշում են 1046—1048 թթ.[24]։

---

20 Գիտնականները ուշադրություն են դարձրել այն հետաքրքիր փաստի վրա, որ Կյուրիկյան հարստության հիմնադիր Գուրգենի գերեզմանաքարն ունի հետևյալ արձանագրությունը. «Այս է հանգիստ Գուրգենա Բագրատունո շահնշահի, որդի Աշոտոյ Ողորմածի» (Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 171)։ Գուրգենը մեծարվում է «Շահնշահ» տիտղոսով, որը կրում էին Անիի թագավորները։

21 Մ ա տ թ է ո ս Ո ւ ռ հ ա յ ե ց ի, էջ 98—99։

22 Նույն տեղում, էջ 102—103։

23 Տե՛ս այդ մասին մեր հոդվածը՝ Լոռվա թագավորությունը Կյուրիկե Ա-ի ժամանակ, Երևանի համալսարանի «Երիտասարդ գիտաշխատող», 1969, № 9։

24 Մ. Չ ա մ չ յ ա ն, Պատմություն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հատ. Բ, Վենետիկ, 1785, էջ 937։ Ե. Լ ա լ ա յ ա ն, Բորչալուի գավառ, էջ 315։ Ղ. Մ ո վ ս ե ս-

Դավիթը թաղված է Սանահնում։ Ունեցել է եղբայր, երեք որդի և մեկ դուստր։ Որդիներից Կյուրիկեի և Գադիկի մասին արդեն խոսվեց վերը։ Երրորդ որդին՝ Ատրներսեհը հիշատակվում է միայն վրացական աղբյուրներում։ Նա գտնվում էր Շամշուլդե բերդաքաղաքում, երբ 1065 թ. Բագրատ Դ վրաց թագավորը գրավեց այն[25]։ Իսկ դստեր՝ Հրանուշի մասին արձանագրություններից հայտնի է, որ կառուցել է Ս. Գրիգոր եկեղեցին ու նշխարատունը և նվիրել Սանահնի վանքին[26]։

յան, նշվ. աշխ., էջ 46։ M. Brosset, Additions et eclaircissements a l'histoire de la Georgie, SPB, 1851, էջ 277 և այլն։

Մատենադարանի № 1737 ձեռագրի «Թագաւորք վերջինք Բագրատունիք» հատվածի հիշատակարանում (տե՛ս Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. 2, Երևան, 1956, էջ 502) և Ստ. Օրբելյանի «Ժամանակագրությունում» (Երևան, 1942, էջ 14) Դավթի մահվան թվականը նշված է 1053 թ.։ Այդ թվականը սխալ է։

[25] Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները..., հատ. Ա, էջ 207։

[26] Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը..., էջ 187։